«ՊԱՏՄԱԳԻՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՐԷՑ» – Լ.
Գ. Մինասեան, Թեհրան, 1956 թ.։

Իրանի եւ իրանահայ ժողովրդի պատ-
մագրութեան համար թանկագին վաւերա-
գիր է ԺԸ. դարի վերջին շրջանի տաղան-
դաւոր պատմաբան Ստեփաննոս Երէցի
(Տ. Ստեփաննոս քհ. Տէրտէրեանի) ձե-
ռագիր մատեանը, որ այժմ առանձին
գուրգուրանքով պահւում է Նոր-Ջուղայի
«Ամենափրկիչ» վանքի թանգարանի ձե-
ռագրական բաժնում։

Այդ պատմագրութիւնն առանձին ար-
ժէք ունի կրկնակի տեսակէտից։ Այնտեղ
կարդում ենք շատ կարեւոր փաստական
տեղեկութիւններ, որոնք պատկերում են
ժամանակաշրջանի իրանական արքաների
– Շահ սուլթան Հուսէյնի, Շահ-Աշրաֆի,
Նադրշահի, Ադըլշահի, Քարիմ Թաղաւո-
րի, Ֆէոդալական խաների, Լօռերի, Աղ-
ւանների եւ նրանց մղած ռազմական պայ-
քարների պատմութիւնը։

Ձեռագիր մատեանում ուրոյն տեղ են
գրաւում նաեւ իրանահայութեան, գլխա-
ւորապէս Նոր-Ջուղայի եւ Սպահանի փէ-
րիա, Բուրւարի եւ այլ գաւառների հայ
ժողովրդի զրկանքների եւ անլուր տան-
ջանքների նկարագրական էջերը։

Ահա թէ ինչու Ստեփաննոս Երէցը
պատկանում է այն պատմագիրների շար-
քին, որի պատմութիւնը մեծ կարեւորու-
թիւն ունի ոչ միայն հայ ժողովրդի, այլ
եւ Իրանի պատմութեան ուսումնասիրու-
թեան համար։

Ահա այս արժէքաւոր պատմաբանի
կեանքին եւ գրականութեանը նւիրւած է
երիտասարդ բանասէր Լ. Մինասեանի
«Պատմագիր Ստեփաննոս Երէց» խորա-
գրով 47 էջերից բաղկացած գրքոյկը։

Դա, անկասկած, Ստեփաննոս Երէցին
նւիրւած առաջին ուսումնասիրութիւնը
չէ։ Պատմագրի արժէքաւոր ձեռագիր մա-
տեանի մասին հայ մամուլում՝ «Նաւա-
սարդ», «Վերածնունդ», «Ալիք», «Հա-
յաստանեայց Եկեղեցի», «Էջմիածին» –
լոյս են տեսել բարեխիղճ վերլուծութիւն-
ներ, անհրաժեշտ տեղեկութիւններ եւ ծա-
նօթութիւններ, որոնք հիմնական գծերով
լուսաբանում են վաստակաւոր պատմա-
բանի կերպարն ու գրականութեան պատ-
կերը։

Լ. Մինասեանը հիմք ունենալով հայ
մամուլում Ստեփաննոս Երէցին նւիրւած
նիւթերը եւ պատմագրի ձեռագիր մատեա-
նը, խմբագրել է մի գրքոյկ, որտեղ սեղմ
տողերով գծել է պատմագրի անձի, կեան-
քի ու գրական գործերի պատկերը։ Թռու-
ցիկ տողերով նկարագրել է նաեւ վաստա-
կաւոր հեղինակի կերպարը, որպէս պատ-
մագիր։ Աւելի լայն տեղ են գրաւում Ստե-
փաննոսի բանաստեղծական արւեստին նը-
ւիրւած նիւթերը, որոնք կատարւած են
մանրակրկիտ եւ բարեխիղճ կերպով։ Այդ
հանգամանքն էլ արժէքաւորում է Մինաս-
եանի գրքի բովանդակութիւնը։

Սակայն պատմագրական մասի ու-
սումնասիրութիւնն ու վերլուծութիւնը չի
խորացւած եւ զուրկ է գիտական կառուց-
ւածքից։ Այդ պակասը մասամբ լրացնելու
համար այստեղ արձանագրենք մի քանի
էական երեւոյթներ։

Անժխտելի է, որ Ստեփաննոս Երէցի
պատմագրութեան հիմնական էջերը թէ՛
Իրանի եւ թէ իրանահայ պատմութեան
ուրոյն շրջանների էական դէպքերի եւ
անցքերի ուսումնասիրութեան համար ոչ
միայն արժէքաւոր աղբիւրներ են, այլեւ
շատ կարեւոր տեղեկութիւններ կան հին
Ֆէոդալական դերիշխողների յարաբերու-
թիւնների մասին։

Նոյնպէս Ստեփաննոս Երէցի ձեռագիր
մատեանում նկարւած են մի շարք գլխա-
ւոր անձեր, որոնք պատմական դէպքերի
ընթացքում վճռական դեր են կատարում։
Այդ Ֆէոդալ դերիշխողների կերպարները
ձեռագրում պայծառ գոյներով գծագրւած
են։ Այս էական հանգամանքների վրայ ա-
ւելացնենք նաեւ ձեռագիր մատեանի այն
կարեւոր էջերը, որոնք դարաշրջանի Ֆէո-
դալ դերիշխողների շահագործման եւ հա-

րստահարութիւնների դէմ են ուղղւած։
Պատմագիր Ստեփաննոս Երէցը նկարա-
գրելով իշխողների ճնշումները եւ ժողո-
վրդի դառն ու անմխիթար վիճակը, ըն-
ւելեայն բողոքում է ամէն տեսակ բռնու-
թիւնների, ճնշումների եւ հարստահարու-
թիւնների դէմ, երեւոյթներ, որոնք պատ-
մայրութիւնն աւելի արժէքաւորում են եւ
խորացնում ձեռագիր մատեանի բովան-
դակութեան տպաւորութիւնը։
Ընդգծենք նաեւ Ստեփաննոս Երէցի ձե-
ռագիր մատեանի գրական եւ գեղարւես-
տական ուրոյն արժէքը։ Նա վառ պատ-
կերներով նկարագրել է ժամանակի Ֆէո-
դալական դերիշխողների ռազմական բա-
խումների տարբեր էջերը, որոնց նկարա-
գրութիւնները պատմագրութեան առան-
ձին գրաւչութիւն են տալիս։
Անժխտելի է, որ Ստեփաննոս Երէցն իր
պատմութիւնը գրել է գիտնականի հմտու-
թեամբ, իսկ երբեմն պատմել է այնպիսի
մանրամասնութիւններ, որոնք խորացնում
են պատմական անցքերի եւ դէպքերի ըմ-
պռնումը։ Պատմութեան մէջ աչքի
են ընկնում նաեւ պատկերաւոր նկարա-
գրութիւնները։ Այդ էական յատկանիշ-
ներն էլ բարձրացնում են ձեռագիր մա-
տեանի գեղարւեստական արժէքը։
Մինասեանի գրքոյկում չենք տեսնում
Ստեփաննոս Երէցի ձեռագիր մատեանի
էական առանձնայատկութիւնների մասին
մեր ընդգծած լուսաբանութիւնները։
Կայ մի այլ կարեւոր հանգամանք։
Ստեփաննոս Երէցի պատմութիւնը մեծ
ազդեցութիւն է թողել հետագայ հայ
պատմաբանների վրայ։ Ձեռագիր մատեա-
նից ամենից շատ օգտւել է «Պատմութիւն
Նոր-Ջուղայու» երկհատորի հեղինակ Յա-
րութիւն Տէր-Յովհաննէսեանցը։ Այս մա-
սին նշել ենք դեռ 1940 թւին «Վերա-
ծնունդ» թերթում։ Նոյն երեւոյթն իր
գրքոյկում արձանագրել է նաեւ Լ. Մի-
նասեանը։ Բայց նկատենք, որ Ստեփան-
նոս Երէցի արժէքաւոր ձեռագիրը միայն
Տէր-Յովհաննէսեանցը չի օգտագործել,
այլ ուսումնասիրել եւ օգտւել են նաեւ մի
շարք հայ բանասէրներ եւ պատմաբաններ,
որոնց շարքում ուրոյն տեղ է գրաւում
պատմաբան Լէօն։
Ուշագրաւ է եւ այն, որ Ստեփաննոս
Երէցի մասին իր ժամանակի գրիչներն ի-
րենց գրած ձեռագրերի յիշատակարաննե-
րում մեծ պատկառանքով են արտայայտ-
ւել, որոնք պատմագրի կենսագրութեան
համար կարեւոր աղբիւրներ են, բայց պա-
կասում են Լ. Մինասեանի գրքոյկում։
Այդ վաւերագրերը հայ մամուլին կը յանձ-
նենք մի յարմար առիթով։
Մի հանգամանք պարզ է, որ Ստեփան-
նոս Երէցի ձեռագիր պատմագրութիւնը
մի արժէքաւոր հանրագիտարան է, ուր
Իրանի եւ իրանահայութեան ժամանակա-
շրջանի քաղաքական դէպքերն ու երեւոյթ-
ները ա՛յնքան հարազատ տեսակներով ցո-
լանում են։ Ապագայ սերունդները կար-
դալով այդ արժէքաւոր պատմութիւնը,
խոր յարգանքով պիտի յիշեն Ստեփաննոս
Երէցի անունը։ Իսկ պատմաբանի կեանքի
եւ գրական գործունէութեան մասին որոշ
գաղափար կազմելու համար գրասէր ըն-
թերցողներին յանձնարարում ենք Լ. Մի-
նասեանի «Պատմագիր Ստեփաննոս Երէց»
խորագրով գիրքը։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Ռաշտ
29 Սեպտ. 1956